№ 268 ՁՈՐԵՔՇԱԲԹԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 4 — 1902 — ՁՈՐԵՔՇԱԲԹԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 4 № 268

ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
ՏԷԼԷՖՕՆ № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
ՏԷԼԷՖՕՆ № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

(31-Դ ՏԱՐԻ)

ԱՌԱՋԻԿԱՑ 1903 ԹՒԱԿԱՆԻՆ

«ՄՇԱԿԸ» ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՆՈՑՆ ՊՐՕԳՐԱՄՈՎ ԵՒ ՆՈՑՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ

ամեն օր, բացի տօներին յաջորդող օրերից։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն եւ մէկ ամսվանը նոյնպէս 10 ռ., տասն ամսվանը՝ 9 ռ., ինն եւ 8 ամսվանը՝ 8 ռ., եօթ եւ վեց ամսվանը՝ 6 ռ., հինգ ամսվանը՝ 5 ռ., չորս ամսվանը՝ 4 ռ., երեք ամսվանը՝ 3 ռ., երկու ամսվանը՝ 2 ռ. եւ մի ամսվանը՝ 1 ռուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դօլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ՝ (Բազարնայա եւ Բարօնական փողոցների անկիւն), իսկ ԲԱԳԻՈՒՄ—Ն. Դաւթեանի մօտ։

Կայարութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար եւ առհասարակ նամակներ եւ ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւնները ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Պետրոս Մարգարեան, Եղիսաբէթ Աւետեան և Լեոն ու Արտաշէս Մարգարեանները ցաւօք սրտի յայտնում են ազգականներին և բարեկամներին՝ առաջինների սիրելի որդու և միւսների թանգագին եղբօր

ՍՏԵՓԱՆՈՍ ՊԵՏՐՈՍԵԱՆ ՄԱՐԳԱՐԵԱՆԻ

մահը, որ տեղի ունեցաւ 22 տարեկան ծաղիկ հասակում նոյեմբերի 30-ին, երկարատև հիւանդութիւնից յետոյ։ Ամբիծքը չորեքշաբթի, դեկտեմբերի 4-ի երեկոյեան, իսկ յուղարկաւորութիւնը հինգշաբթի, դեկտեմբերի 5-ին, առաւօտեան ժամի 10-ին իրանց բնակարանից (Լազարեան փողոց, սեփական տուն, № 15) դէպի Էջմիածնեցոց ս. Գէորգ եղեղեցին, իսկ թաղումը—Խօջիվանքի գերեզմանատունը։ 1—1

ԲԱՆԱՄԻՐԱԿԱՆ

ԶԻՆԱՒՈՐՎԱԾ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆԸ

Si vis pacem, para libertatem et justitiam.

Եթէ կամենում ես խաղաղութիւն՝ պատրաստիր ազատութիւն և արդարադատութիւն։

III

Պատերազմի ջատագովները ասում են, որ զօրագունդը, բանակը բարերար ազդեցութիւն է գործում երիտասարդութեան վրա, լրացնելով նրա քաղաքացիական դաստիարակութիւնը, ընտելացնելով նրան քաջութեան, կարգապահութեան և հայրենասիրութեան, կազդուրելով մի և նոյն ժամանակ նրա մկանունքները, մի խօսքով, բանակը հայթայթում է երիտասարդութեան ֆիզիքական և բարոյական բերկրանք, առանց որի ազգերը կարող են լուծվել և ընկնել լեռարգիական քնի մէջ։ Ուրեմն այդ առարկութիւնից հետեւում է, որ ոչ պատերազմասէր ազգերը ապականված են, թուլամորթ և մեղկացած։

Այդ առարկութիւնը ոչ մի կրիտիկայի չէ դիմանում, որովհետև՝ ինչո՞ւ այն ժամանակ այնպիսի ազգերի մէջ, ինչպէս են անգլիացիները, նուէյցարիացիները, բելգիացիները, հոլանդացիները, ամերիկացիները, աւստրալիացիները, որոնց մօտ միլիտարական ոգի չը կայ և որոնք մնայուն զօրքեր չունեն, պատուի, հայրենասիրութեան և ուրիշ քաղաքացիական սխրագործութիւնների գաղափարը աւելի սաստիկ է զարգացած, քան զինուորասէր ազգերի մէջ։ Մթթէ փոքրիկ Շուէյցարիան, որ ապրում է առանց պատերազմների, ընկղմվել է լեռարգիական քնի մէջ։

Կան պատերազմասէր ազգեր, տոգորված միլիտարիզմի ոգով, որոնց մօտ ամեն բան կազմակերպված է պատերազմի համար,—պարտադիր և ընդհանուր զինուորական ծառայութիւն, պատերազմական անագին բիւդջէտ, զինուորական ռէժիմի գերակշռութիւն քաղաքացիական ռէժիմի վրա, հսկայական մնայուն զօրքեր։ Այդպէս են Գերմանիան, Ֆրանսիան, Իտալիան, Ռուսաստանը, Աւստրիան։ Սակայն կան և ուրիշ երկիրներ, ըստ էութեան խաղաղասէր, ինչպէս Միացեալ-Նահանգները, Անգլիան, Հոլլանդիան, Սկանդինաւիան, Շուէյցարիան. այդտեղ զինուորական ծառայութիւնը պարտադիր չէ, զինուորական ռէժիմը գերակշիռ չէ և զօրքերը խիստ սակաւաթիւ են ազգի զանգուածի համեմատութեամբ։ Մթթէ ուրեմն կարելի է պնդել, որ բոլոր այդ ազգերը աւելի շատ են փչացած, ապականված, քան միւսները. մթթէ անգլիական հասարակութիւնը աւելի շատ է անբարոյականացած, քան գերմանականը։ Անգլիան, չնորհիւ այն հանգամանքի, որ կէս դարի ընթացքում վայելում էր խաղաղութիւն, կարողացաւ հաստատել ամեն տեղ իր առևտուրը, արդիւնաբերութիւնը, իր լեզուն, քաղաքակրթութիւնը. մթթէ դրանով նա դարձաւ աւելի լեռարգիական, քան Ֆրանսիան, որ թափեց իր լաւագոյն արիւնը և չդայլեց իր ամենալաւ ոսկիները Մէքսիկայում, Իտալիայում, Հռենոսի ափերին։ Նապոլէօնեան ժամանակի Ֆրանսիան լեռարգիական չէր, բայց մթթէ նա աւելի հարստացաւ դրանից. արդեօք նա բարձրացաւ այդ յանցաւոր պատերազմների ժամանակ, որոնց մէջ նրան ձգեց բռնակալի ֆանտազիան. արդեօք ձեռք բերեց նա ազգերի սէրը և յարգանքը. արդեօք լայնացրեց նա իր սահմանները։ Տարակոյս չը կայ, որ Նապոլէօնի զինուորները ցոյց տուին ամենամեծ առաքինական սխրագործութիւններ, բայց այն գործը, որի համար նրանք մեռնում էին, թափում իրանց արիւնը, ամենաանարդար և խայտառակ գործ էր։ Պատմութիւնը արդէն վաղուց անդառնալի կերպով արտասանել է այդ մասին իր դատավճիռը։

Զինուորի քաջութիւնը պատերազմի դաշտում արժանի է գովասանքի, բայց քանի որ այդ քաջութիւնը կապված է արեան, արտասուքների, աւարառութիւնների, աւերումների, հրդեհների, կոտորածի հետ, մենք ասում ենք, որ նա անօգուտ է։ Երբ մենք կը ջնջենք, կը վերացնենք պատերազմը, քաջութեան և պատուի աղբիւրը չի թառամի։ Դեռ կը լինեն լայն դաշտեր, ուր կարելի կը լինի գործադրել այդ յատկութիւնները. փոխանակ գործադրելու այդ առաքինական յատկութիւնները մահաբեր գործերի համար, մենք կը գործադրենք խաղաղութեան, սիրոյ, եղբայրական հաշտարարութեան գործերի համար։

Կայ և մի այլ կարեւոր առարկութիւն ի պաշտպանութիւն պատերազմի, որ առաջ է բերել գերմանական փիլիսոփայ Հեգելը.—«Պատերազմը լաւագոյնի յաղթութիւնն է»։ Դրանով նա կամենում է ասել, որ թէեւ պատերազմը զոհեր է տանում, բայց նա վերջնականապէս հաստատում է ուժեղի յաղթութիւնը, իսկ աւելի ուժեղը և լաւագոյնն է։ Ով յաղթում է, կը նշանակէ նա արժանի է այդ յաղթութեան։ Եթէ մի ազգ պարտութիւն է կրել, յաղթվել է, կը նշանակէ նա պէտք է այդպէս լինէր, նա արժանի էր այդ պարտութեան։ Երկու կռւող ազգերի մէջ միւնը միւսից աւելի առաջ է գնացել էվոլիւցիայի մէջ, աւելի ուսեալ է և աւելի քաջ. սա, ի հարկէ, յաղթական դուրս կը գայ։ Այժը բնակված է զինուորի առաքինութիւնների մէջ և ոչ մի բան այնքան արդար չէ, ինչպէս այժի առաջնութիւնը. նա առաքինութեան առաջնութիւնն է։

Այս մակաբերութիւնը բոլորովին անկայուն է։ Ըստ Հեգելի, լաւագոյնի յաղթութիւնը միայն ուժեղի յաղթութիւնն է, իսկ աւելի ուժեղը նա է, ով աւելի շատ զօրք և հրանօթ ունի, բայց նա ոչ լաւագոյնն է, ոչ արդարագոյնը։

Եղած կանոնադրութիւններին դիմելը ունի այն յարմարութիւնը, որ կանոնադրութիւն հաստատող ատեանը այլ ևս ստիպված չի լինի մանրամասն քննել և ուսումնասիրել նոր կանոնադրութիւնը, այլ կը կենտրոնացնէ իր ուշադրութիւնը միայն փոփոխութիւնների վրա։ Փորձը ցոյց է տալիս, որ նորմալ կանոնադրութիւնից շեղվող կանոնադրական ծրագիրները երկար ժամանակ մնում են չը քննված և բոլորովին չեն հաստատվում կամ թոյլատրելի են համարվում այն դէպքում, եթէ նրանք յարմարեցրած կը լինեն նորմալ կանոնադրութեան։

Աչքի առաջ ունենալով, որ մանաւանդ գաւառացիների համար դժուար է կանոնադրութիւններ մշակելը, մենք անհրաժեշտ ենք համարում մատնացոյց լինել դիւրացնող պայմանների վրա։ Ընկերակցութիւններ կազմակերպելու գաղափարը ինքն ըստ ինքեան համակրական է և վարչական հիմնարկութիւնները նայում են նրանց վրա բարեհաճ աչքով։ Ուստի մնում է, որ տեղական գործողները ցոյց տան փոքր ինչ աշխոյժ և գործելու ցանկութիւն, որպէս զի գաւառի զանազան մասերում իրագործված լինեն մի շարք ընկերակցական ձեռնարկութիւններ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Գիտութիւնն ամենակարող է։ Ի՞նչեր չէ ասում նա։ Կար ժամանակ, երբ մարդիկ ահ ու սարսափով խոնարհվում էին բնութեան արհաւիրքների առաջ, երկրպագութիւն էին տալիս նրանց, իբրև աստուածութեան։ Բայց եկաւ գիտութիւնը, բացատրեց այդ երեւոյթների պատճառը և ցրվեց մոլորութիւնը։ Կար ժամանակ, երբ մահը անողոք ճակատագիր է համարվում մարդկանց համար։ Բայց գիտութիւնը ասում է, որ մահը ոչ մի կրիտիկայի չէ դիմանում, որովհետև՝ ինչո՞ւ այն ժամանակ այնպիսի ազգերի մէջ, ինչպէս են անգլիացիները, նուէյցարիացիները, բելգիացիները, հոլանդացիները, ամերիկացիները, աւստրալիացիները, որոնց մօտ միլիտարական ոգի չը կայ և որոնք մնայուն զօրքեր չունեն, պատուի, հայրենասիրութեան և ուրիշ քաղաքացիական սխրագործութիւնների գաղափարը աւելի սաստիկ է զարգացած, քան զինուորասէր ազգերի մէջ։ Մթթէ փոքրիկ Շուէյցարիան, որ ապրում է առանց պատերազմների, ընկղմվել է լեռարգիական քնի մէջ։

Կան պատերազմասէր ազգեր, տոգորված միլիտարիզմի ոգով, որոնց մօտ ամեն բան կազմակերպված է պատերազմի համար,—պարտադիր և ընդհանուր զինուորական ծառայութիւն, պատերազմական անագին բիւդջէտ, զինուորական ռէժիմի գերակշռութիւն քաղաքացիական ռէժիմի վրա, հսկայական մնայուն զօրքեր։ Այդպէս են Գերմանիան, Ֆրանսիան, Իտալիան, Ռուսաստանը, Աւստրիան։ Սակայն կան և ուրիշ երկիրներ, ըստ էութեան խաղաղասէր, ինչպէս Միացեալ-Նահանգները, Անգլիան, Հոլլանդիան, Սկանդինաւիան, Շուէյցարիան. այդտեղ զինուորական ծառայութիւնը պարտադիր չէ, զինուորական ռէժիմը գերակշիռ չէ և զօրքերը խիստ սակաւաթիւ են ազգի զանգուածի համեմատութեամբ։ Մթթէ ուրեմն կարելի է պնդել, որ բոլոր այդ ազգերը աւելի շատ են փչացած, ապականված, քան միւսները. մթթէ անգլիական հասարակութիւնը աւելի շատ է անբարոյականացած, քան գերմանականը։ Անգլիան, չնորհիւ այն հանգամանքի, որ կէս դարի ընթացքում վայելում էր խաղաղութիւն, կարողացաւ հաստատել ամեն տեղ իր առևտուրը, արդիւնաբերութիւնը, իր լեզուն, քաղաքակրթութիւնը. մթթէ դրանով նա դարձաւ աւելի լեռարգիական, քան Ֆրանսիան, որ թափեց իր լաւագոյն արիւնը և չդայլեց իր ամենալաւ ոսկիները Մէքսիկայում, Իտալիայում, Հռենոսի ափերին։ Նապոլէօնեան ժամանակի Ֆրանսիան լեռարգիական չէր, բայց մթթէ նա աւելի հարստացաւ դրանից. արդեօք նա բարձրացաւ այդ յանցաւոր պատերազմների ժամանակ, որոնց մէջ նրան ձգեց բռնակալի ֆանտազիան. արդեօք ձեռք բերեց նա ազգերի սէրը և յարգանքը. արդեօք լայնացրեց նա իր սահմանները։ Տարակոյս չը կայ, որ Նապոլէօնի զինուորները ցոյց տուին ամենամեծ առաքինական սխրագործութիւններ, բայց այն գործը, որի համար նրանք մեռնում էին, թափում իրանց արիւնը, ամենաանարդար և խայտառակ գործ էր։ Պատմութիւնը արդէն վաղուց անդառնալի կերպով արտասանել է

Միթէ նա, ով յաղթող է հանդիսանում մենամարտութեան մէջ, և լաւագոյնն է և արդարագոյնը. նա միայն աւելի ճարպիկ է, աւելի ուժեղ իր հակառակորդից, և մենամարտի ելքը ոչ մի յարաբերութիւն չունի արդարութեան հետ։ Եթէ վճռողական ձայնը պէտք է պատկանի յաղթութեան և զէնքին, այն ժամանակ փոքր ազգութիւնները պէտք է անհետանան աշխարհի երեսից։ Այն ժամանակ պէտք է հրաժարվել գեղարուեստից, գիտութիւնից, մտքից։ Ոչ, թող ներէ մեզ փիլիսոփայ Հեգելը. մարդկութեան մասին ունեցած մեր իդէալը այդ չէ. մեր իդէալը ոյժը չէ, այլ իրաւունքը. մենք ցանկանում ենք, որ ազգերի յարաբերութիւնները դեկավարողը լինի արդարադատութիւնը։

Մեզ կասեն, որ պատերազմները այժմ հազւադէպ են և պետութիւնները ամեն կերպ խոյս են տալիս պատերազմից, որովհետև նրանք չատ լաւ գիտեն, որ եթէ այժմ Եւրոպայում պատերազմ ծագի, նա կը լինի համատարած, և ժամանակակից տեխնիքական կատարելագործութիւնները ի նկատի առած, նա կը լինի սոսկալի ու կը վերջանայ պատերազմող կողմերի եթէ ոչ ամենքի, բայց մեծամասնութեան կատարեալ քայքայմամբ և աղքատութեամբ։ Սակայն, նախ պատերազմները այնքան էլ հազուագիւտ չեն. ահա ձեզ մի ցուցակ, որից կը տեսնէք թէ 19-րդ դարի ընթացքում քանի տարին պատերազմի, քանիսը խաղաղութեան տարի է եղել։

Ամեն 10 տարվայ ընթացքում

	պատերազմ.	խաղաղ.
1800	10	0
1810	7	3
1820	10	0
1830	10	0
1840	4	6
1850	7	3
1860	9	1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դիւրութիւններ. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մի հետաքրքրական ուսումնասիրութիւն. Հայոց ներկայացումները. Նամակ Շուշուց. Նամակ Բաթումից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՄԻՐԱԿԱՆ. Զինաւորված խաղաղութիւն.

ԴԻՒՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մենք ուրախ ենք, որ արձագանք է գտնում գաւառում ընկերակցութիւններ կազմելու գաղափարը։ Մեզ լուրեր են հասնում, որ Դանձակի և Երևանի նահանգների մի քանի տեղերում փոք է յղացել փոքրիկ ընկերակցութիւններ կազմել և նրանց միջոցով բարելաւել տեղական գիւղատնտեսութեան դրութիւնը։

Արդեօք հնարա՞ւոր է ընկերակցութիւններ կազմելը, արդեօք հեշտ է կանոնադրութիւններ մշակելը և նրանց հաստատելը։

Պէտք է նկատել, որ Թիֆլիսի և Բուենոս Այրեսի նահանգում ներկայումս գոյութիւն ունեն մի քանի ընկերակցութիւններ, այն է Գօրու գաւառի կալուածատէրերի ընկերակցութիւնը, «Կախէթիա» կոչված գինեվաճառների ընկերութիւնը և Բուենոս Այրեսի նահանգում շերամապահական ընկերակցութիւնը։

Եթէ նոր ընկերակցութիւն կազմակերպել ցանկացողները վերցնեն իրանց համար ուղեցոյց թէ այդ ընկերակցութիւնների կանոնադրութիւնները և թէ այն ընդհանուր նորմալ կանոնադրութիւնը, որ հրատարակված է երկրագործութեան մինիստրութեան կողմից, նրանք կարող են օգտվել պատրաստ նիւթից, մոցնելով նրա մէջ այն փոփոխութիւնները, որ թելադրում են տեղական հանգամանքները։

այդ մասին իր դատավճիռը։

Զինուորի քաջութիւնը պատերազմի դաշտում արժանի է գովասանքի, բայց քանի որ այդ քաջութիւնը կապված է արեան, արտասուքների, աւարառութիւնների, աւերումների, հրդեհների, կոտորածի հետ, մենք ասում ենք, որ նա անօգուտ է։ Երբ մենք կը ջնջենք, կը վերացնենք պատերազմը, քաջութեան և պատուի աղբիւրը չի թառամի։ Դեռ կը լինեն լայն դաշտեր, ուր կարելի կը լինի գործադրել այդ յատկութիւնները. փոխանակ գործադրելու այդ առաքինական յատկութիւնները մահաբեր գործերի համար, մենք կը գործադրենք խաղաղութեան, սիրոյ, եղբայրական հաշտարարութեան գործերի համար։

Կայ և մի այլ կարեւոր առարկութիւն ի պաշտպանութիւն պատերազմի, որ առաջ է բերել գերմանական փիլիսոփայ Հեգելը.—«Պատերազմը լաւագոյնի յաղթութիւնն է»։ Դրանով նա կամենում է ասել, որ թէեւ պատերազմը զոհեր է տանում, բայց նա վերջնականապէս հաստատում է ուժեղի յաղթութիւնը, իսկ աւելի ուժեղը և լաւագոյնն է։ Ով յաղթում է, կը նշանակէ նա արժանի է այդ յաղթութեան։ Եթէ մի ազգ պարտութիւն է կրել, յաղթվել է, կը նշանակէ նա պէտք է այդպէս լինէր, նա արժանի էր այդ պարտութեան։ Երկու կռւող ազգերի մէջ միւնը միւսից աւելի առաջ է գնացել էվոլիւցիայի մէջ, աւելի ուսեալ է և աւելի քաջ. սա, ի հարկէ, յաղթական դուրս կը գայ։ Ոյժը բնակված է զինուորի առաքինութիւնների մէջ և ոչ մի բան այնքան արդար չէ, ինչպէս ոյժի առաջնութիւնը. նա առաքինութեան առաջնութիւնն է։

Այս մակաբերութիւնը բոլորովին անկայուն է։ Ըստ Հեգելի, լաւագոյնի յաղթութիւնը միայն ուժեղի յաղթութիւնն է, իսկ աւելի ուժեղը նա է, ով աւելի շատ զօրք և հրանօթ ունի, բայց նա ոչ լաւագոյնն է, ոչ արդարագոյնը։

գրի մի անխուսափելի դատավճիռ էր հաստատվում. բայց միջամտեց գիտությունը և ցույց տուեց, որ դա էլ մի բնական երևույթ է, որը մեծ կախում ունի մարդու կենցաղից ու շրջապատող պայմաններից, որ դրա դէմ էլ հնարաւոր է կուել հատապատասխան զէնքերով։

Հիանդոտ է ներկայ հասարակական կեանքը։ Շատ ու շատ վէրքեր ունի նա. վէրքեր, որոնք իւրաքանչիւր օր հարիւրաւոր ու հազարաւոր մարդկանց գերեզման են գլորում։ Սակայն գիտությունը ինքնատար բժշկի նման ուշի ուշով հետևում է այդ ամենքին, միշտ աշխատելով գտնել չարիքի պատճառն ու դարմանը։

Հասարակական կեանքում շատ մեծ դեր է խաղում տնտեսական գործօնը, բայց միւս գործօնների ազդեցությունն էլ նշանաւոր է։ Տարիներ առաջ հռչակաւոր գիտնական Կետուլէն իր խորագնին ուսումնասիրությամբ ցույց տուեց, որ մարդկանց մահացությունն ու ծընունդը, ոճրագործությունն ու ինքնասպանությունը մեծ կախում ունեն տարվայ, նոյն իսկ օրվայ եղանակից։

Այդ գիտը դարձաւ մի խթան աւելի հեռուն գնալու, հարցը աւելի լուսաբանելու համար։ Ամերիկացի պրոֆէսօր Էդվին Դեկստերը մի չարք վիճակագրական տեղեկություններով զինված «Annale of the American Academy of Political and social Science» հրատարակության մէջ ցույց է տալիս այն առընչությունը, որ գոյություն ունի արբեցողության և օդի—եղանակի մէջ։

Արբեցությունը. որքան ընտանիքներ է դժբաղդացնում, քանի մարդկանց կեանք է խեղաթիւրում նա։ Կատարեալ չարիք մարդկության համար։ Շատ խորն են նրա արմատները, շատ բազմազան են նրա պատճառները։ Իսկ պրոֆէսօր Դէկստեր գալիս է ապացուցանելու, որ օդը—եղանակն էլ իրանց տեղն ունեն այդ պատճառների չարքում։ Դիմենք նրա փաստերին։

Երեք տարվայ ընթացքում Նիւ-Եորկում արբեցողության համար ձերբակալված են եղել 63,117 հոգի, որոնցից 44,495-ը տղամարդիկ, իսկ մնացածը—կանայք։ Ոստիկանության ցուցակներում որոշ նշանակված են, թէ որ օրը որքան արբեցող է ձերբակալված։ Այդ մի և նոյն ժամանակ Նիւ-Եորկի օդերևութաբանական կայարանի ցուցակներից երևում են եղանակի զանազան փոփոխությունները համապատասխան օրերում։ Այնպէս որ այդ երկու ցուցակներից տեղեկություններ քաղելով, Դէկստեր կարողացել է կազմել չափազանց հետաքրքրաշարժ դիագրամներ և նրանցից դուրս բերել հետևեալ եզրակացությունը։

Արբեցողության համար ամենանպաստաւոր ամիսն է դեկտեմբերը, իսկ նրանից յետոյ հոկտեմբերը, նոյեմբերը, փետրվարը, ապրիլը, յունվարը, մարտը, սեպտեմբերը, մայիսը, յունիսը, օգոստոսը և յուլիսը։ Ուրեմն ամենաշատ արբեցող ամիսն է դեկտեմբերը, իսկ ամենաքիչը—յուլիսը։ Ուշի ուշով քննելով եղանակի բարեխառնությունը այդ ամիսների ընթացքում, կարելի է նկատել, որ ամենից շատ արբեցողության դէպքեր են եղել ամենացուրտ եղանակներին։ Ուրեմն ցուրտը նպաստում է արբեցողությանը։

Դրանից յետոյ Դէկստեր քննության է առնում օդի միւս յատկությունը՝ խոնաւությունն ու չորությունը։ Բանից դուրս է գալիս, որ խոնաւությունն էլ նպաստում է արբեցողությանը, որովհետև ամենից շատ ձերբակալվածներ են եղել այն ժամանակ, երբ բարօմետրը ցույց է տուել 95, իսկ ամենաքիչը այն ժամանակ, երբ այդ թիւը հասել է 40-ի։

Իսկ քամին... նրա ազդեցությունն էլ մեծ է։ Նոյն վիճակագրությունը ցույց է տուել, որ ամենից քիչ թիւով արբեցող մարդիկ են եղել խաղաղ-հանդարտ եղանակին և ընդհակառակը՝ այդ թիւը աւելացել է քամու ոյժի հետ զուգահեռաբար։ Երբ քամու ոյժը հասել է 250—300 մղոնի, այն ժամանակ արբեցողների քանակն էլ անցել է սովորական աստիճանից, նորմայից, իսկ սաստիկ փոթորկի ժամանակ այդ քանակը աւելացել է գրեթէ 50%-ով։

Բացի դրանից պարզվել է, որ արբեցողության դէպքերի ամենափոքր թիւը եղել է կիսաամպամած օրերին, միջակ թիւը—ամպամած օրերին, իսկ ամենամեծ թիւը—պարզկայ օրերին։

Այդպէս ուրեմն, ամփոփելով բոլոր փաստերը, կարելի է գալ այն եզրակացությանը, թէ մարդկանց արբեցողությանը նպաստում են ցուրտն ու խոնաւությունը, քամին ու մասամբ ամպերը։ Այդ է ցույց տալիս ամերիկացի սոցիոլոգի ուսումնասիրությունը։

Սակայն դժուար է այդ ամենը արդէն ապացուցված գիտական ճշմարտություն համարել, քանի որ հարցը դեռ քննվում է մասնագէտների կողմից, քանի որ չէ կարելի Դէկստերի ուսումնասիրությունը լիակատար համարել։ Նա աչքի առաջ է ունեցել միայն Նիւ-Եորկը, բայց չէ՞ որ ուրիշ տեղերում կարող են բոլորովին այլ փաստեր գոյություն ունենալ։ Նա համեմատության է դրել միայն ձերբակալված արբեցողների թիւը, բայց չէ՞ որ շատ հարբեցողներ էլ կարող էին ոստիկանության աչքից վրիպած և չը ձերբակալված լինել։

Առայժմ պարզ է միայն այսքանը. տարվայ ու օրվայ եղանակները կամ ուրիշ իսկ ասած՝ օդի պէս-պէս յատկությունները որոշ ազդեցություն ունեն արբեցողության վրա։ Իսկ թէ ինչ ձևով ու չափով—դա ապագայի լուծելիք հարցն է։

Ե. Թ.

ՀԱՑՈՑ ՆԵՐԿԱՑԱՑՈՒՄՆԵՐԸ

Երկուշաբթի, դեկտեմբերի 2-ին, հայոց դրամատիկական ընկերությանն խումբը, ի նպաստ տիկին Մայսուրեանի, ներկայացրեց Պոտապենկոյի «Դիւթական Հէքիաթ» պիեսան, թարգմանությունն Ս. Ադամեանի, և «Նկարիչներ» վոդեվիլը, փոխադրությունն Գ. Զմշկեանի։

Թէ ինչու տիկին Մայսուրեան իր բենեֆիսի համար ընտրել էր այդպիսի պիեսա, չը գիտենք, սակայն պէտք է ասենք ամենայնիւ չնորհակալ լինենք, որ նա կանգ էր առել գաղափարական բովանդակություն ունեցող պիեսայի վրա, թէև նրա մէջ չօշափված հարցերը նորություն չեն կազմում։ Համեստ, չունևոր չբրջանի մի օրիորդ, Նատալիան, ստանում է ուսումն ինստիտուտում, բայց երբ ինստիտուտից վերադառնում է իր մօր, մի աշխատաւոր կնոջ, տունը, ուր տիրում է աղքատություն, կեղտոտություն, թշուառություն, ուր ընտանիքի ամեն մի անդամը, և ծեր մայրը և նրա որդի ուսանող Իպպոլիտը, չարքաշ աղքատությամբ ձեռք են բերում ապրուստը, ուր նա պէտք է պառկէ անչուք անկողնում, ուր ամեն բոպէ նրա երեսին են խփում նրա անգործությունը, նա սկսում է ատել այդ տեսակ կեանքը, կենցաղը. նա անց է կացնում օրերը պարապ և երազում է նորից մտնել այն դիւթական, հրապուրիչ աշխարհը, որ նա ստեղծել էր իր համար դեռ ինստիտուտում։ Ապրել կօնֆօրտներով լի կեանքով—ահա օրիորդի իդէալը, և նա փախչում է մօր տնից ու գնում ինստիտուտի իր ընկերուհու եղբօր, գեղեցիկ, հարուստ երիտասարդ կոմս Իժօրսկու տունը, որ ծանօթ էր առաջուց օրիորդին։ Եւ պատահում է շատ սովորական, չբլօնական բան. օրիորդը դառնում է կոմսի սիրուհին, ապրում է փարթամության, չքեղության մէջ, մի խօսքով իրագործվում է նրա «Դիւթական Հէքիաթը»։ Սակայն որովհետև նա փչացած չէ, շուտով նկատում է այդ ոսկեզօծած, չարաված կեանքի ամբողջ կեղտոտությունը, անբարոյականությունը, փտությունը, և մի վիրաւորանք, որ հասցնում է նրան կոմսի ընկերներից մինը, սթափեցնում է նրան, բարոյական յեղաշրջումն է առաջ բերում և նա որոշում է փախչել այդ ոսկեզօծված կեանքից ու սկսել իր համար նոր կեանք աշխատության հիման վրա։ Նա մերժում է մինչև անգամ կոմսի առաջարկությունը՝ ամուսնանալ նրա հետ և դառնալ կոմսուհի։ Նոր կեանք, որի նշանաբանն է—սեփական աշխատություն, անկախություն, անհատական գործունէություն։

Տիկին Մայսուրեան, որ խաղում էր այդ հերոսուհու դերը, պէտք է ասել, մեծ ազնվությամբ տարաւ նրան, բացի առաջին գործողությունից, ուր նա թոյլ էր։ Ցարգելի տիկինը բաւական մեծ առաջադիմություն է գործել և հայոց լեզուի մէջ և, անկասկած, եթէ շարունակէ կատարելագործվել, նա, վերջի վերջոյ, կը տիրապետէ լեզուին, մի բան, որ մինչև այսօր նրան թոյլ կերպով էր պակասում։ Մանաւանդ մեծ տպաւորություն թողեց նրա զգացված խաղը երրորդ և վերջին գործողության մէջ։ Անկասկած, նա միանգամայն արժանի էր այն ծափահարություններին, որ հասարակությունը չռայլում էր նրան և մատուցած բազմաթիւ ծաղիկներին ու ընծաներին։

Աբէլեան, կոմս Իժօրսկու դերում, և Պետրոսեան, Արկադի Սվիբուժոկիի դերում, նոյնպէս շատ լաւ տպաւորություն թողեցին մեր վրա, մանաւանդ տիպական էր Պետրոսեանի խաղացած դերը։ Զմշկեան, ուսանող Իպպոլիտի դերում, ներկայացրեց մեզ մի հոգով արդէն ծերացած և տափակ գաղափարների տէր ուսանող, և այդ տիպը, մեր կարծիքով, պիեսայի մէջ ամենանաջողն է։

Թատրոնի պարտէրը և վերնայարկը լի էին հասարակությամբ, բայց Սօլօլակի հայ բուրժուազիան յամառ կերպով շարունակում է իր անտարբերության ապացոյցները տալ։

Հ. Ա.

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

Նոյեմբերի 26-ին

Մեր եկեղեցու ամենաբարձր, ամենանուիրական սկզբունքներից մէկը ընտրությանն սկզբունքն է. ընտրություն քահանայի, ընտրություն երէցփոխի եւ այլն։ Դարերից ի վեր այդ գեղեցիկ սկզբունքը նուիրագործվել է եկեղեցու վարդապետների ձեռքով եւ իբրեւ մի սուրբ աւանդ մեր ձեռքը հասել, անցնելով նաև պետական օրէնքների համակարգությանն մէջ։ Ընտրությունը իր լայն իմաստով տարրական հասկացողություն է դարձած այսօր ամենայնիւ գեղջուկի համար անգամ։ Մտէք գիւղը եւ դուք կը տեսնէք այնտեղ, առանց բացառության, ամեն տանից մի-մի մարդ ժողովված չինաւորում՝ կամ քահանայ են ընտրում, կամ երէցփոխ, կամ տանուտէր։ Այդտեղ հաւասար յարգ ունի ամենավերջին տաւարածի ձայնը։

1802—15	Նապոլէօն	5,000,000	20,316 »
			5,000 »
1812—15	Մեծ Բրիտ.-Ամ.	30,000	1,400 »
1828—	Ռուս. Թիւրք.	120,000	400 »
1830—40	Սպանիա-Փորթուգալ.	150,000	700 »
1830—47	Ֆրանսիա-Ալժիր	100,000	950 »
1848—	Եւրոպա, քաղաքաց. կռիւներ	60,000	250 »
1854—56	Ղրիմի պատ.	790,000	8,500 »
1839—42 1856—60	Անգլ. Չինաս.	60,000	690 »
1859—	Իտալիա	65,000	1,500 »
1861—65	Ժառ. կռիւները	951,186	50,000 »
1860—65	Ֆրանս, Սիրիա, Մէքսիկա, Չինաստ. Կոչինչին	65,000	1,000 »
1864—	Դանիա-Աւստրիա-Պրուսիա	10,000	360 »
1866—	Պրուս., Աւստրիա, Իտալ.	95,000	1,650 »
1864—70	Բրազիլ-Պարագվայ	330,000	1,200 »
1860—74	Բրիտանիա, Նոր-Զելանդիա, Աշանտի	25,000	275 »
1870—71	Ֆրանսիա-Գերմանիա	365,000	12,875 »
1877—	Ռուս.-Թիւրք.	344,000	6,452 »
1839—40 1878—80	Անգլիա-Աֆղան.	80,000	875 »
1884—	Ֆրանս.-Թոնքին	30,000	(?) »
1885—	Սերբիա-Բոլղար.	15,000	775 »
1894—	Չինաս.-Եապոն.	25,000	1,500 »
1897—	Յունաս.-Թիւրք.	(?)	160 »
1898—	Միաց. Նահ.-Սպանիա	90,000	4,000 »
1800—99	Անգլիացիները Աֆրիկ.	190,000	800 »
1899—	Անգլիա-Տրանսվաալ (միայն Անգլիայի համար)	17,500	1,500 »

Այս ցուցակը դեռ լիակատար չէ և պարունակում է միայն 19-րդ դարի պատերազմների մի մասը, իսկ շատ պատերազմներ՝ եւրոպական, ամերիկական, դաղթականական, ինչպէս և կոտորածների (հայկական և այլն) քանակությունը բաց են թողնված, և սակայն այդ անկատար ցուցակից տեսնում ենք, որ սպանվել են մօտ 10,000,000 մարդ և ծախսվել է 123½ միլիարդ ֆրանկ։

Եթէ չը լինէին այդ պատերազմները, Եւրոպայի բնակիչների թիւը, որ 1897 թ. հաշվում են 380 միլիոն և ամեն մի բնակչի տարեկան միջին եկամուտը—451 ֆրանկ, այժմ կը լինէր 425 միլիոն և ամեն մի բնակչի եկամուտը 551 ֆրանկ։

Շնորհիւ այդ պատերազմների Եւրոպայի պարտքերը հասնում են այժմ (1900 թ.) մօտ 130 միլիարդ ֆրանկի, որոնց համար վճարում են տարեկան տոկոս 5 միլիարդ 731 միլիոն ֆրանկ, ինչպէս ցույց է տալիս այս պատկերը։

Եւրոպական ազգային պարտքերը 1900-ին

	միլիոն	ֆրանկ
Ֆրանսիա	31,024	»
Ռուսաստան	20,072	»
Մեծ-Բրիտանիա	15,876	»
Աւստրօ-Ունգարիա	14,352	»
Իտալիա	12,908	»
Սպանիա	9,242	»
Թիւրքիա	4,076	»
Պորտուգալիա	3,938	»
Գերմանիա	2,826	»
Բելգիա	2,614	»
Հոլլանդիա	2,381	»
Ռումանիա	1,225	»
Յունաստան	761	»
Շուէդ-Նորվէգիա	664	»
Սերբիա	417	»
Դանիա	289	»
Բոլղարիա	207	»
Շուէյցարիա	83	»

Եւրոպայի զինուորական ծախքերը, թէ ցամաքային և թէ ծովային, առաջադիմական կարգով, սկսած 1865-ից մինչև 1898 թ., հետևեալ կերպով են արտայայտվում.

Զինուորական ծախսեր

	I 1869—70		1880—1881	
1. Ֆրանսիա	549,3	միլ.	1,016,1	միլ. ֆր.
2. Ռուսաստան	615,6	»	872,8	» »
3. Գերմանիա	573,6	»	501,4	» »
4. Աւստրօ Ունգ.			311,4	» »
5. Իտալիա	184,4	»	237	» »
6. Անգլիա	605,6	»	760,6	» »
7. Բելգիա	36,8	»	44,1	» »
8. Հոլլանդիա	50,5	»	69,7	» »
9. Շուէյցարիա	4,8	»	14,1	» »
Գումարն է.	2.620,6	.	3.827,3	» »

	II 1886—87		1897—98	
1. Ֆրանսիա	904,7	միլ.	880,8	միլ. ֆր.
2. Ռուսաստ.	982,3	»	918	» »
3. Գերմանիա	539,4	»	877,8	» »
4. Աւստ.-Ուն.	342,2	»	337,8	» »
5. Իտալիա	342,6	»	404,3	» »
6. Անգլիա	978,4	»	1.016,9	» »
7. Բելգիա	45,6	»	53,4	» »
8. Հոլլանդիա	69,4	»	82,5	» »
9. Շուէյցարիա	17,2	»	25	» »
Գումարն է.	4.221,8	»	4.596,5	» »

Դուք տեսնում էք, ուրեմն, որ զինաւորված խաղաղության ժամանակ, զինուորական ծախսերը Եւրոպայի 9 պետությունների համար հասնում են 1898-ին 4.596,5 միլիոն ֆրանկի, մինչ 1870-ին միայն 2.620,6 միլիոն ֆր. էր։

(Կը շարունակվի)

Իսկ մեզանում, Շուշիում, ընտրութիւնը հակացվում եւ գործադրվում է ուրիշ հիմունքների վրա։ Ընտրութիւն բառը քաղաքում, բացարձակ կերպով կարելի է ասել, որ եղծված է եւ կորցրած իր նշանակութիւնը։ Եւ եթէ նշանակվում է ընտրութիւն, դա միայն ձեւի համար է։ Վերցրէք ինչ ընտրութիւն ուզում էք. յայտարարեցէք, հրաւիրեցէք ժողովրդին, նշանակեցէք ժողով, թէկուզ տասն անգամ, եւ դուք քաղաքում գտնվող 3–4 հարիւր միականից եկեղեցու դրանը յիսուն մարդ չէք տեսնի։ Ես կը համաձարեմ իմ խօսքը եւ այդ ընտրութիւններից կը տամ հետեւեալ պատկերը։

Շուշիում քահանայի կարիք կայ. այդ անուրանալի է։ Քահանայ չատ ունենք. թիւը հաստատաբար պէտք է ասել, որ դեռ չատ է, բայց մի հատիկ քահանայ չունենք, որ մի բանի պէտք գայ եւ մենք պարծենանք նրանով։

Բնականաբար քահանայի կարիք է առաջ գալիս։ Դիմում են առաջնորդին, հրահանգներ ինդրում։ Որոշվում է ընտրութիւն կատարել։ Տպագրվում են լրագրական յայտարարութիւններ, հրաւիրվում են ցանկացողներ, որոշ ցէնզի կրթութեան անձեր։ Շատերն են ցանկութիւն յայտնում Շուշում քահանայ լինելու։ Եւ ընտրողները արտօնութիւն են ստանում ժողով գումարելու, թեկնածուներ առաջարկելու։ Ժողովը ազատ իրաւունք է վայելում իր միջից նախագահ ընտրելու, քննելու, դատելու այդ հարցը եւ լաւերի միջից ընտրութեան ելք հանելու։—Նուիրագործված սկզբունքի անբռնադատ իրագործումն։ Եւ որքան միութարական մեր օրերում։

Սպասում ենք անհամբեր։

Դարձեալ հիասթափութիւն։ Ասիականութիւնը զօրեղ է։

Մենք յանկարծ տեսնում ենք Շուշու քահանայացուների ընտրութեան ղեկը յանձնած Բենիկ վարդապետին։ Ահա նա Ղազանչեցոց եկեղեցում իր շուրջը հաւաքած քառասունի չափ ժողովուրդ՝ ընտրութիւն է կատարում։ Դա առաջին ժողովն է եւ հաճարվում է օրինական... Նա նախագահ է ժողովի։ Նա ծալում, մի կողմ է դնում ընտրութեան հրահանգ, ընտրութեան սկզբունք, ցանկութիւն յայտնող թեկնածուների թղթեր ու անուններ, հանում է ծոցից մի նամակ եւ դիմում է շրջապատողներին. «Պարոններ, ես կը տամ ձեզ արժանաւոր քահանայ, ճեմարանական, իմ դաստակեր, Նուխվայ քաղաքի համար ձեռնադրված Ապրելեան քահանային։ Դուք չէք ճանաչում նրան. ես վկաներ եմ բերել հետս. ահա բժ. Մէլիք-Մուրադեան. հարցրէք։ Նա այնտեղ չէ կարողանում ապրել, եկամուտը քիչ է, օդը անտանելի, երեխաներն ուսումից զուրկ. պէտք է բերել այստեղ դպրոց տալ. պէտք է բէալական դպրոցում կրօնուսոյց լինի եւ ձեզ վրա քահանայ, որ կարողանայ ապրել»։

«Հայր սուրբ, քանի՞ տարեկան կը լինի»,—հարցնում է ծխականներից մինը։

«Երեսուն երեք տարեկան»,—պատասխանում է նա։

«Բօ, ադա էդ հօ մեր Յիսուս Քրիստոսի հասակին է, բաս չատ լաւ մարդ կը լինի, դէ եկէք ձեռք քաշենք թղթին»։

Եւ ներկայ գտնվող քառասուն հոգուց երեսուն երեքը ոչխարային հետեւողութեամբ ստորագրում են թղթին ու Ապրելեան քահանային աւետում ընտրութեան ելքը։

Բայց դրանով չէ վերջանում ընտրութիւնը։ Ասիականութիւնը վառ կերպով առաջ է գընում։—Եկեղեցու երեցփոխը, թուղթը ծոցում դրած, խանութների եւ փողոցների խորշերում մարդիկ է բռնում եւ ստորագրութեան թիւը չատացնում, որպէս զի ընտրութիւնը կատարեալ լինի եւ նուիրագործված սկզբունքը իր գործադրութեան վերջակէտին հասած։

Սպասում ենք, որ Բենիկ վարդապետը միւս եկեղեցիներին էլ կը տայ մի մի այսպիսի քահանաներ եւ մեզ կը հասցնէ երջանկութեան և փառքի աշխարհը։ Ի՞նչ գործ ունի թեմական դպրոցի լիազօր տեսուչը քահանայական ընտրութեան գործում, ես չը գիտեմ. միայն կասեմ, որ սա մի հանելուկ է, որ ոչ մի գաղտնիք չունի։ Նա օրինիբուն, ափիբերան, բա՛ւական էր միշտ, որ հոգևոր կառավարութիւնը մի խոշոր պակասութիւն ունի, այն՝ որ մի ժողովրդի վրա ձեռնադրված քահանային տեղափոխում է մի ուրիշ ժողովրդի մէջ։ Եւ այդ միջոցը նա համարում էր «եկեղեցական պոռնկութիւն»։ Դեռ այդ «անաթեման» թարմ է նրա բերանում. դեռ չէ սառել նրա շրթունքների վրա, և այսօր, նա ինքը «եկեղեցական պոռնկութեան» նպաստող ու ձեռներէց է հանդիսանում։ Սա փաստ է, անխժտելի իրականութիւն է։

Մինթէ նա է մեղաւոր։ Արդէ՞ք մենք ինքներս չենք ոտնակոխ անում մեր իրաւունքներն ու պարտականութիւնները։

Տ.

ՆԱՄԱԿ ԲԱԹՈՒՄԻՑ

—

Նոյեմբերի 20-ին

Նոյեմբերի 17-ին տեղի ունեցաւ տ. Զաբէլի և պ. Խարազեանի չորրորդ ներկայացումը՝ «Ղարաբաղի Աստղագէտը»։ Ամեն անգամ, երբ միտք է յղանում մեր մէջ ներկայացումների մասին քննողական մտքով մի որ և է բան գրելու, մի ներքին ձայն արգելք է հանդիսանում նրա իրագործման։ Ինչո՞ւ։ Որովհետև գաւառներում պտտող, մանաւանդ քիչ թուով դերասանների դրութիւնը այնքան աննախանձելի է, որ մարդ չէ կարող ամեն ինչ մի կողմը դնել և դերասաններին էլ խիստ կրիտիկայի ենթարկել, պահանջել, որ նրանք ամեն բանում անթերի լինեն։ Պահանջել դերասանից, որ նա ամիսներով նստէ մի տեղ և մանրակրկիտ պատրաստութիւններ տեսնէ ամեն մի ներկայացման համար,—այդ անկարելի է, իսկ 4—5 օրը, կամ չատը 10 օրը, այնքան չնչին միջոց է թատրոն վարձելու, ափիշներ պատելատալու, նուագախումբ վարձելու, տոմսակներ ծախելու համար կասսում նստելու, շորեր ճարելու, դերեր արտագրելու և բաժանելու և այլն և այլն, որ դերասանը այլուս ոչ մի հնարաւորութիւն չունի լուրջ կերպով ուսումնասիրելու իր դերը և կարելին չափ լաւ պատրաստվելու ներկայացման դիշերվայ համար։ Եւ ահա հէնց այդ է պատճառը, որ ամեն անգամ աչքի է ընկնում դերասանի անպատրաստ լինելը իր խաղացած դերերի ժամանակ, լինի դա շորերի, դերը չը գիտենալու վերաբերմամբ։ Եթէ այդ բոլորի վրա աւելացնենք և սիրողներից ոմանց կապրիզները, երբեմն ամենաչնչին պատճառներից առաջացած հակակրութիւնները և այլն, այն ժամանակ իսկապէս կը տեսնենք, որ դերասանների կողմից միանգամայն զոհողութիւն է գաւառներում պտտել և ներկայացումներ տալը։

«Ղարաբաղի Աստղագէտը», ինչպէս և միւս ներկայացումների մեծ մասը, խաղի կողմից անցաւ միջակ, իսկ մուտքի կողմից—այնքան ժողովուրդ էր եկել և թատրոնը այնպէս էր լցվել, որ աւելին երևակայել անհնարին է։ Սակայն, չը նայելով այդ միութարական երևոյթին, այնուամենայնիւ ներկայացումը չը կարողացաւ զերծ մնալ մեզ յատուկ փոքրոգութիւն ներկայացնող մի քանի մանր ձևերից, որոնք սակայն անուշադիր չը մնացին հասարակութեան կողմից և խիստ արհամարհանքի արժանացան նրանց խղճալի հեղինակները...

Այսպէս թէ այնպէս, այս տարի մեր քաղաքը 4 էժանագին ներկայացում ունեցաւ և դեռ, ինչպէս լսում ենք, 3 էլ պէտք է տեղի ունենայ։ Աւելորդ է ասել, որ այդ բոլորը մեծ բարիք է մեր քաղաքի ոչ հարուստ դասակարգի համար, որը փոխանակ 10—40 կոպէկով իր մայրենի լեզուով ներկայացումներ տեսնելու՝ ով գիտէ, որ գինետան մէջ պէտք է վատնէր արիւն քրտինքով վաստակած իր մի քանի ռուբլինե՞ր...

Բոլոր սրտով աղողութիւն ենք ցանկանում յարգելի դերասան-Կրին։

Գ. Գրիգորեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մեզ հաղորդում են, որ դիտաւորութիւն կայ առաջիկայ 1903 թ-ին միւռոնօրհնութեան հանդէս կատարել Էջմիածնում։ Գուցէ այս անգամ հանդէսը տեղի ունենայ դարնան վերջերին, մայիս ամսի վերջին թւերում։

—

Այս դեկտեմբեր ամսի 6-ից Երևանի երկաթուղային գիծը անցնում է Անդրկովկասեան երկաթուղիների վարչութեան ձեռքը և դրա հետ միասին սկսվում է գնացքների կանոնաւոր երթևեկութիւնը Ալէքսանդրօպոլի և Երևանի մէջ։

—

Թիֆլիսում եղանակը ցրտել է և չրջակայ լեռներում ձիւն է եկել։

—

Մենք հաղորդել էինք, որ երկրագործութեան և պետական կալուածների մինիստրութիւնը որոշել է մօտ ապագայում ձեռնամուխ լինելու կովկասեան պետական գիւղացիների հողային կարգաւորման գործին։ Այժմ մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ մինիստրութիւնը, համաձայնութիւն կապելով կովկասեան կառավարչապետի հետ, վճռել է գիւղացիների հողային կարգաւորումը սկսել Թրֆլիսի և Երևանի նահանգներից, որոնց մէջ հաշտարար միջնորդների բաւարար թիւը հեշտացնում է յիշված գործը։

—

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը,—ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագիրները,—պետական խորհրդի քննութեանն է առաջարկում կանանց բժշկական ինստիտուտի համար կազմած մի նոր կանոնադրութիւն, որով այդ ինստիտուտն աւարտող կին—բժիշկների իրաւունքները հաւասարեցնվում են հանրապետների բժշկական ֆակուլտէտներում աւարտածների իրաւունքների և արտօնութիւնների հետ։

—

Բժիշկ Վօյնօ, որի անունը, իբրև վկայի, չատ անգամ յիշվեց լրագիրներում նրա կենակից Կոսակովսկայայի սպանման գործի հետ, մօտ օրերումս, Անդրկովկասեան երկաթուղիների կառավարչի կարգադրութեամբ, արձակվեց երկաթուղային բժշկի պաշտօնից նրա համար, որ հրաժարվել էր գնալ երկաթուղու արհեստանոցներում ծառայող՝ վիրաւորված վարպետ Բլիսմբերգի բնակարանը բժշկական օգնութիւն հասցնելու։

—

Երկրագործութեան և պետական կալուածների մինիստրութիւնը մշակում է գիւղական դասակարգի համար գիւղատնտեսական ընկերակցութիւններ կազմելու մի նոր հեշտացրած ձև։ Գիւղատնտեսական ընկերակցութիւնների այժմեան կանոնադրութիւնը, ինչպէս պարզ երևաց, գործադրելի է միայն խոշոր գիւղատնտեսների և սեփականատէրերի համար, այն ինչ բուն գիւղական դասակարգի համար նա ներկայացնում է մի չարք անյարմարութիւններ։ Ի նկատի կայ՝ նոր կանոնադրութեան մէջ կրճատել ընկերակցութիւնների գործերը կառավարող վարչութեան անդամների թիւը, մի չարք փոփոխութիւններ մտցնել ընկերակցական կանոնների մէջ և հեշտացնել ընկերակցութիւնների գործը գիւղական արտադրութիւնները վաճառահանելու մէջ։

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են. «Ժողովրդական թատրոնի գործը աջողութեամբ առաջ է գընում։ Նաւթարդիւնաբերողների ժողովի խորհուրդը նշանակել է Սև-Քաղաքի և Բալախանիի համար եկող տարվայ ծախսելիք 15,000 ռուբլի. 7,000 ռուբլի Սև-Քաղաքի բնակարանը բարեշինելու համար և 4,000 ռուբլի Բալախանում նոր չէնք կառուցանելու համար»։

—

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են. «Օր չէ անցնում, որ կարասում մէկ կամ մի քանի խանութներ չը մտնեն գողերը. առաւօտը, երբ վեր ես կենում, իսկոյն հետաքրքրվում ես՝ այսօր ո՞ւմ խանութն են մտել։ Այնչափ բազմաթիւ և իր տեսակի մէջ տարօրինակ գողութիւնները կարասցիք ոչ տեսել են և ոչ լսել։ Խանութն առանց կոտրելու և որ և է վնաս տալու, բանալիով բաց են անում և գնալուց յետոյ կրկին կողպում։ Պատահում են և դէպքեր, որ բաց են անում փականքներից մէկը կամ մի քանիսը և առանց որ և է վնաս տալու խանութին, թողնում գնում են։ Քաղաքացիք շուարած մնացել են և չը գիտեն ինչ անեն։ Անցած օրը հաւաքվել են ոստիկանատան մէջ նշանաւոր, չատ թէ քիչ աչքի ընկնող առևտրականները խորհրդակցելու՝ այդ բանի առաջը մի կերպ առնելու համար, բայց երկար ու բարակ խորհրդակցելուց յետոյ միակ միջոցն են համարում գիշերապահների թիւն աւելացնելը։ Սակայն, ինչպէս երևում է, այս էլ ոչ մի օգուտ չէ տալիս, որովհետև տեղիս՝ յայտնի վաճառականներից եղը. Ղոնդաղչեանները առանձին պահապան են վարձում միմիայն իրանց խանութի համար, առանձին լապտեր են կախում իրանց դռանը և երկու օր առաջ էլ մի հոր դաղտնիքով փականն են սարքում դրանը, բայց այսօր նրանց խանութն են մտնում, պատահմամբ դրամարկղի բանալին էլ արդէն վրան է եղել ու տանում են, ինչպէս ասում են, մօտ եօթը հազար ռուբլի դրամ և ոսկի։ Դռները այնպէս փակ է եղել, ինչպէս իրանք տէրերը փակել են, բայց դրամարկղները խառնած և այդքան գումարը չը կայ։ Մի հանելուկ, որ ոչ տէրերը, ոչ պօլիցիան և ոչ էլ քաղաքացիք չեն կարողանում պարզել։ Քաղաքացիք կասկածում են դիմել բարձր իշխանութեանը, որ ուշադրութիւն դարձնվի և առանձին հսկողութիւն նշանակվի այդ բանի համար, որովհետև ոչ մի ապահովութիւն չէ ներկայացնում այժմս Կարսը և ոչ ոք չէ հաւատում, որ եթէ երեկոյեան խանութում մի քանի կոպէկ թողնէ, առաւօտեան իր տեղում կը լինի։ Տեսնենք այս ամենն ինչով կը վերջանայ»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Արդէն երկրորդ տարին է,—ասում է «Մէյվերէթ» լրագիրը,—որ երիտասարդ Թիւրքերը Եւրոպայում կազմել են մի միութիւն մաքառելու սուլթանի կառավարութեան դէմ։ Թէպէտև նրանք ցրված են Ֆրանսիայի, Շվեյցարիայի, Անգլիայի և Բելգիայի կենտրոններում, թէպէտև նրանց գործողութիւնների և հայեացքների մէջ նկատվում են տարբերութիւններ, բայց բոլորի նպատակն էլ է և եղել է միշտ մի բան—ազատել Թիւրքիան այժմեան բէժիմից։ Սակայն ամեն կողմից լսվում են ձայներ, թէ ինչու երիտասարդ-Թիւրքերը մնում են միշտ Թէօրիայի չրջանում։ Ոմանք էլ, ցաւելով մեկ, վերագրում են մեր անգործութիւնը Թիւրքական մասսայի անտարբերութեան և ուղղահաւատների ֆատալիզմին։ Բայց իսլամի ֆատալիզմը բոլորովին այնպիսին չէ, որ մահմեդականը ստիպված լինի տանել ակնյայտնի անարդարութիւններ և բռնութիւններ իր անձի դէմ։ «Դիմադրիր,—ասում է Մահմէդը,—օրէնքի խախտմանը»։ Բայց մահմեդականը ստոյիկական անձնուրացութեամբ տանում է այն ամենը, ինչի դէմ ոչինչ անել չէ կարող։ Ապստամբեցին հայերը, ապստամբեցին բուլգարները Մակեդոնիայում,—բայց միթէ նրանք յոյսերը միայն իրանց վրա էին դրել։ Նրանք ստանում էին և ստանում են ամեն տեսակ քաջալերութիւններ այն Եւրոպայի կողմից, որի ինտելիգենցիայի մի մասը Շատոբրիանի հետ միասին կրկնում է, թէ «մարդկային ցեղը ոչինչ չի կորցնի օսմանեան կայսրութեան ջնջվելով», իսկ միւս մասը օգուտ է քաղում հայերի և բուլգարների անունից քաղաքական որոշ նպատակների հասնելու համար յօգուտ իրանց երկիրների՝ չմոռանալով հայերին և բուլգարներին կոյր գործիքներ։ Այն ինչ Թիւրքերի համար ոչ մի օգնութիւն չը կայ արտաքուստ. քրիստոնեայ աշխարհը մինչև անգամ ատում է նրանց։ Թիւրքիայի մէջ նրանք աւելի դժբախտ են քան բուլգարներն ու հայերը։ Նրանց կրած վիրաւորանքների և ապօրինութիւնների համար ոչ մի հիւպատոս կամ դեսպան ոչ մի խօսք չի ասի նրանց պաշտպանելու մտքով։ Նրանք այնպիսի ճնշման տակ են գտնվում, որ նրանց դրութիւնը ոչնչով չէ տարբերվում բօէրական կանանց դրութիւնից անգլիական կենտրոնացրած բանակներում։ Բայց բօէրական կանայք կարողանում էին գոնէ ազատ լաց լինել և արտասուքով սփոփել իրանց վիշտը. մինչ դեռ մահմեդականները նոյն իսկ լաց լինելու իրաւունք չունեն։ Նրանք դրված են այն դրութեան մէջ, որ հայրը պէտք է լռեցնի լինի որդու համար, իսկ որդին հօր համար։ Իսկ մեր հանմախոնների մասին խօսելն անգամ աւելորդ է. հազարաւորները նրանցից կ. Պոլսում, Զմիւռնիայում, Բէյրութում և այլ քաղաքներում խեղդվում են բանտերում կամ ուղղակի կենդանի-կենդանի ծռվում են գցվում»։

—«Proïa» լրագիրը ասում է, թէ պարսկական կառավարութեան ներկայացուցիչ Մօավին-Դօվլէ-Իբրահիմ խանի Աթէնք գնալը քաղաքական մի նշանաւոր անցք է համարվում Ցունաստանում, որովհետև Դարեհ Վշտասպեանի օրերից յետոյ, 2393 տարվայ ընթացքում, Պարսկաստանը առաջին անգամ ուղարկում է իր ներկայացուցչին Ցունաստան։

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՄԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

2 դեկտեմբերի

ԿԱՐԱԿԱՍ։ «Ստեֆանիի գործակալութիւնը» հաղորդում է, թէ իտալական դեսպանը դիմել է Վէնեցուէլայի կառավարութեան՝ հարկադրաբար պահանջելով վճարել իտալական հպատակներին 2,810,255 բոլիվիանէսի հասնող վարձատրութիւն։

ՊՈՒԷՐՏՕ-ԿԱԲԷԼԼՕ։ Նոյեմբերի 30-ին երկու նաւեր կրակ բաց արին մարտկոցի վրա, որը սկզբում պատասխանեց, բայց շուտով ստիպվեց լռել։ Քաղաքին վնաս չէ հասցրած։

ԼԻՒՆԷՎԻԼ։ Բացված է վիպագրող Էրկման-Շատրիանի արձանը։ Հանդիսաւոր հացկերոյթի ժամանակ Անդրէ վստահութիւն յայտնեց զօրքի և երկրի պաշտպանութեան վերաբերմամբ և յարգանք—դէպի հանրապետական հիմնարկութիւնները։

Կ. ՊՕԼԻՍ։ Դամասկոսում խօլէրա երևաց։ Բէյրութից ուղարկվող ապրանքները ենթարկվում են քննութեան։

ՇԷՐԲՈՒՐԳ։ Հանդիսաւոր հացկերոյթի ժամանակ Պէլլբան ասաց, որ նրա իդէալն է ազգերի հաշտարարութիւնը, բայց նա հպատակվում է ժամանակի պահանջներին եւ կանէ այն ամենը, ինչ որ պահանջում են ֆրանսիական դրօշակի բարձրադոյն շահերը եւ պատիւը։

ՊՕՏՍԴԱՄ։ Պետական կանցլերը ստացաւ Հոհենցօլէրնների չքանչանի շղթան։

ՎԻԵՆՆԱ։ Աստրիական կայսրը չնորհեց Բիւլովին իր պատկերը երեքպատեան գաշնակցութիւնը վերանորոգելու համար։

3 դեկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ներքին գործերի մինիստրը որոշեց արգելել «Биржевыя Вѣдомости» լրագրի հատով վաճառումը։—Եօկոհաման համարվում է ժանտախտի կողմից բարեյաջող։—Օդեսայում հոկտեմբերի 23-ից յետոյ ժանտախտի կողմից կասկածելի հիւանդութեան դէպքեր չէն պատահել։

ԲԱԳՈՒ։ Բացվեց նաւթարդիւնաբերողների համաժողովը։

ԼԱԳՈՒԱՅՐԱ։ «Խարիբդիս» նաւի նուաստիները օգը թոցրին ատուերկրեայ զինանոցները և գրաւեցին Լիմբերտադոր ամրոցը։ Լուրերին նայելով՝ «Խարիբդին» այսօր գնում է դէպի Լագուայրա, իսկ «Վինէտա» մնում է ՊուէրտոՔաբէլլոյում։ Հօլլանդական մի նաւ հաղորդում է, թէ Վէնէցուէլական «Զամորա» նաւը գրաւված է։ Գրաւված «Բէատրաղոր» նաւի ծառայողներն ուղարկված են Կարակաս։

ՊԱՐԻԶ։ «Nord» լրագրի աշխատակցի գումարած ժուրնալիստների ժողովը՝ սերբիական ժուրնալիստ Ֆաբրիցի կալանաւորման առիթով, որը բանտարկված է Բագուզայի բանտում, վճռեց խնդիրը ուղարկել մինիստրնախագահ Կերբէրին՝ Ֆաբրիցին ազատելու մասին։ Խնդիրը ստորագրեցին բոլոր խմբագիրները։

ԼԱԳՈՒԱՅՐԱ։ Ռմբակոծութիւնը չարունակվում էր 45 րոպէ։ Կաստրոյի այն հեռագիրը, որով հրամանագրվում էր ՊուէրտոՔաբէլլոյի իշխանութիւններին բաւարարութիւն տալ պահանջներին, անկարելի եղաւ հասցնել նաւը մինչև ռմբակոծութիւնը։ Աւերակ են դարձրված «Սալանս» ամրութիւնը և Լիբերտադոր ամրացրած բերդը. բերդի հրամանատարը գերի է բռնված. վիրաւորված են երկուսը։

ՀՌՈՄ։ Պատգամաւորների ժողովը ընդունեց առաջարկութիւնը լրացուցիչ կրեդիտների մասին 1878 թւի կոնտինգէնտը զէնքի կանչելու համար։

ԼՕՆԴՕՆ։ Նախագահ Կաստրո հրամայեց դադարեցնել բռնի միջոցները և վերադարձնել գոյքը բրիտանօ-գերմանական երկաթուղիական ընկերութեան։

ԲԵՐԼԻՆ։ Կայսրը ցանկութիւն յայտնեց կոմս Բիւլովին իշխանական տիտղոս չնորհելու, բայց թողեց իր դիտաւորութիւնը կանցլերի խնդիրքի պատճառով։

ՎԱՇԻՆԳՏՈՆ։ Ամերիկական «Մարիէտտա» մարտանաւը գտնվում է Լագուայրում։

ԼԱԳՈՒԱՅՐԱ։ Գերմանացիները գրաւեցին երեք նաւ. «Բէատրաղոր» այժմ լողում է գերմանական դրօշակի տակ, միւս երկու նաւերը—«Տոտումո» և «Գենեռալ Կրէսպո», իւրաքանչիւրը 137 տօն, հնութեան պատճառով ջրասոյզ արվեցին։

ԲԵՐԼԻՆ։ Լուրերին նայելով, «Vorvörts»-ի դէմ սկսած դատաստանական գործը Կրուպպին վիրաւորելու համար, պրոկուրորի կողմից դադարեցրած է։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)

Ամէն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վենէրական (սիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.
ԶԻՆՕՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ—10—11 ժ. մորթու, վենէրական և վիրաբուժութիւն։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՆԵԱՆՑ—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.
Կ. Ի. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.
Դ. Ա. ԹԱՐԽԱՆԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ. երկուշ. չորեք. ուրբաթ։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ. երեքշ. հինգշ. շաբաթ։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ն. Ն. ՌՈՍՏՈՄՐԷԿՈՎ—5—6 ժ. վիրաբուժ. և մորթու հ. (էլեկտրաբուժ.)։
Ա. Ն. ՇՊԱԿՈՎՍԿԻ—6—7 ժ. նեարդային (էլեկտրաբոյժ), վենէրական և մորթու։
Գ. Ա. ԹԱՐԽԱՆԵԱՆՑ—7—8 ժ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7½—8 ժ.

Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Օ. Ց. ԱՌՎԱՆԻՑԱԿԻ—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

ԲԺԻՇԿ

Լ. ՔԱԼԱՆԹԱՐԵԱՆ

Ընդունում է աչքի հիւանդութիւն ունեցողներին։ Ժամի 11½—1½ առաւօտեան եւ 5½—6½ երեկոյեան։ Լաբօրատորնայա փող., № 11։
5—6

«ԱՐՄԻՆԻԱ» ԼԻՆՉԻ

հեղինակի պատկերով եւ ինքնակենսագրութեամբ։ Գրեց Գ. ՏՕՆԱԳԵՏԵԱՆ
Գինն է ճանապարհածախսով 1 ր. 25 կ.
Դիմել այխատասիրողին՝ 117, Godolphin, «Road London, W.»
8—10

ՏԻՐ-ԵՆՈՒԵԱՆՑԻ ՑԱՑՏԱՐԱՐԱԾ

Սեւ ծովի ափին գտնվող դիւղի համար

Հարկաւոր չէ

ՈՒՍՈՒՑԻՉ։ ԱՐԴԷՆ ՎԱՐՁՎԱԾՆԵՐ ԿԱՆ։
3—4

ԲԺԻՇԿ Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիս, մորթու եւ վենէրական ախտ ունեցող հիւանդներին։ Քիմիական-միկրոսկոպական կաբինէտ, որտեղ ընդունվում են կաթի, խորխի, մէզի եւ արեան անալիզներ։
Առաւօտեան 11—1 ժ.
Երեկոյեան 4—6 ժ.
Բեռաւաչկայա փողոց № 41. տան Արարատեանի։ Бебутовская ул. № 41, Домъ Араратова.
30—150

Թիֆլիսի Ժողովարան

Երկուշաբթի, դեկտեմբերի 9-ին, նշանակված է պ.պ. անդամների ընդհանուր ժողով քուէարկելու համար կանդիդատներին եւ քննելու մի քանի անտեսական եւ այլ հարցեր, որի համար անհրաժեշտ է բոլոր անդամների թւի մի երրորդի ներկայութիւնը։
3—8

Լոյս տեսան և վաճառվում են

1903 թ. Մ. ՀՄՇԿԵԱՆԻ ՕՐԱՑՈՒՅՑՆԵՐԸ

Հասցէն. Թիֆլիս, Մակար Զէրչկեան։
2—10

XX-ՐՈՐԴ ԴԱՐԻ ՀՐԱՇԱԼԻՔ

Ամենամեծ եւ միակ ֆէնօմէն առանց ձեռքերի՝ Սէնիօր Բարաօնի, ծնվել է առանց երկու ձեռքերի 1880 թւին Պալերմօ քաղաքում (Իտալիա), վերջացրել է դեղարուեստի ակադեմիան ոտքերով եւ նկարում է իւրաքանչիւր այցելուի պատկերը, հասարակութեան աչքի առաջ, 10 րոպէի ընթացքում։ Սէանսները տեղի են ունենում իւրաքանչիւր կէս ժամը մի անգամ փոստային բաց նամակների ցուցահանդէսում՝ որ կազմել է Ֆրանսիական a la ville de Paris ֆիրմայի պատեստը, Գոլովինակի պրոսպէկտի վրա, արքունի թատրոնի դիմացը։ Մուտքը—25 կոպ. երեխաները վճարում են 15 կոպ.։ Հասակաւորները տանում են 6, իսկ երեխաները—3 բաց նամակ, որպէս պրէմիա։
3—4

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ

ԼԱԲՕՐԱՏՕՐԻԱ

Գ. ՓԱՍՏՐՄԱՋԵԱՆԻ

ԴՈԿՏՕՐ ՔԻՄԻԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Քիմիական անալիզներ (տրակական եւ քանակական) ամեն տեսակ նիւթերի՝ հանքեր, հանքային ջրեր, գիւղատնտեսական նիւթեր եւ այլն եւ այլն։
Տեխնիկական փորձեր եւ խորհուրդներ։

Դիմել՝ Тифлисъ, Кавказская Центральная Лабораторія Доктору химіи Г. Пастермаджіянъ, Вельяминовская ул., д. Лорисъ-Меликова, № 19.
9—24

Ֆինանսների նախարարութեան իրաւասութեան տակ գտնվող

ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Հեղինակ «Առեւտրական, գործարանական եւ նաւթարդիւնաբերութեան հաշւապահութեան ձեռնարկի», որ ֆինանսների նախարարութեան ուսումնական բաժնի կողմից ընդունված է իբրեւ օժանդակ ձեռնարկ առեւտրական դպրոցներում

ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է

Երկու տեսի անձանց՝ գործնական ձեւով հաշւապահութիւն 4 ամսում։

ՊԱՐԱՏՈՒՆԿԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ

1) Իտալական կրկնակի հաշւապահութիւն արդիւնագործութեան բոլոր ճիւղերի վերաբերեալ. վաճառականական, բանկային, յոնձնարարական, գործարանական, նաեւ նաւթարդիւնաբերական եւ նաւթագործական հաշւապահութիւն։
2) Առեւտրական թուաբանութիւն։
3) Առեւտրական թղթակցութիւն։
4) Մուրհակային եւ առեւտրական օրէնքներ։
5) Վայելչագրութիւն եւ ուղղագրութիւն ամենապատ ձեռագրի։

Ընդունելութիւն ամեն օր։ Պարապմունքները սկսվում են 1903 թւի Յունվարի 15-ից պարբերաբար ամեն 4 ամիս, ամենայն օր ճաշից յետոյ՝ 60 բուբլի վճարով ամբողջ դասընթացքի համար։

Դասընթացքը աւարտողներին տրվում են, ֆինանսների նախարարութեան թոյլատրված ծրագրի համաձայն, ատեստատներ։

Ցանկացողներին խնդրում են դիմել գրաւոր կերպով կամ անձամբ կուրսերի հիմնադրին՝ Թիֆլիսում, Н. В. Абраамяну, Николаевская ул. № 46, ամենայն օր։ Ծրագիրն ուղարկվում է ձրի։

Վերեւում յիշված ձեռնարկը ծախվում է Ռուսաստանի բոլոր գրավաճառանոցներում։ Ստորագրողները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պոստի ծախս վճարելու։ Գինն է 3 ր. 50 կոպէկ։ (Կ. Ե. Հ.)
3—25

Սանկտ-Պետերբուրգ 1870 թ. Մոսկվա 1865 թ. Մոսկվա 1882 թ. Նիժնի-Նովգորոդ 1896 թ.

ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐԻ

ԽԻ ՐԷՏԻՆԻ ՈՒՐԻՇ ԻՐԵՂԷՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ՊԱՐԳԵՒ (GRAND-PRIX)

Պարիզի ցուցահանդէսում տրված է Ռուսաստանից ՄԻՄԻԱՅՆ

ՐԷՏԻՆԻ ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱՅԻ ՌՈՒՍ-ԱՄԵՐԻԿԱԿԱՆ

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ

որ հիմնված է 1860 թւականին

Խնդրում եմ ՐԷՏԻՆԻ ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐ գնելիս ուշադրութիւն դարձնել կրունկներ հեռեւեալ կնիքի վրա



Մանաւանդ ընկերութեան հիմնարկութեան «1860» թւականի եւ «Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ», խօսքերի վրա՝ կարմիր եռանկիւնու մէջ (գործարանի կնիքը)։

ՄԵՆՔ ՓԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԾԱԽՍ ԿԱՑԱՐՈՒՄ Է

«ԷՕՊՕԼԴ ՆԷՑՇԷԼԷՐ» առեւտրական տունը

Ս.-Պետերբուրգում, Մոսկվայում, Ռիգայում, Օդէսայում, **ՐՕՍՏՕՎՈՒՄ ԴՕՆԻ ՎՐԱ** Եկատերինոսլաւում, Իրկուտսկում եւ Խարկովում։

13—35

Дозволено Цензурою, Тифлисъ, 3 Декабря 1902 г. Электропечатня Груз. Издат. Т—ва, Б.-Ванкская ул.